ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Մասնակից՝ Աստղիկ Համբարձումյան

<<Կապանի № 13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Ղեկավար՝ Ն. Ջավադյան

Վերապատրաստում իրականացնող կազմակերպություն՝

<<Կապանի թիվ 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

2022թ

Բովանդակություն

1. Ներածություն
2. Տարբերակված առաջադրանքների կիրառման ռազմավարությունը:
3. Նպատակներն ու խնդիրները
4. Օրվա դասի պլանի նմուշ
5. Եզրակացություն
6. Հղումներ
7. Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարբերակված առաջադրանքների կիրառումը և դասի արդյունավետությունը

Տարբերակված առաջադրանքների կիրառումը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում: Տարբերակված առաջադրանքների կիրառումը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Սակայն այս սահմանումը, թերևս, թաքցնում է կրթական տարբերակված-ներառական կրթության երևույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը: Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը և վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումները և պատկերացումները: Ավելին, տարբերակված առաջադրանքների կիրառումն դպրոցներում և համայնքներում հավուր պատշաճի ներդնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքականություն մշակողները, համալսարանները, դպրոցները, հասարակական կազմակերպությունները, ծնողները և այլ մասնակիցները ներգրավվեն գործընթացի մեջ: Ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար 2003-թվականից ՀՀ-ում ստեղծվել է մի ամբողջական համալիր, որոնց ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը, սակայն ուսուցիչներից քչերն են մասնակցել այնպիսի վերապատրաստման կամ կրթական ծրագրերի, որոնք թույլ կտան հանրակրթական դասարաններում իրականացնելու այդ երեխաների կրթական կարիքներին համապատասխան ռազմավարություններ և ծառայություններ:

Ինչպե՞ս կառուցել տարբերակված ուսուցման գործընթացը

Ուշինսկին ասել է <<Եթե մանկավարժությունը ցանկանում է մարդուն դաստիարակել բոլոր առումներով, ապա պետք է նրան ճանաչի բոլոր առումներով>>:

Ըստ մտավոր զարգացման աստիճանի

Ըստ սովորողի օգնության աստիճանի

Ըստ կատարողի անկախության աստիճանի

Ըստ ֆիզիկական կամ հոգեբանական առանձնահատկությունների

Ըստ ընտանիքում ապրելու և սոցիալական պայմանների

Տարբերակված ուսուցման գործընթացն իրականացնելու համար համար պետք է օգտագործել անձնական դիտարկումներ, զրույցներ ծնողների հետ, կատարել հարցումներ հոգեբանների և այլ սոցաշխատողների հետ:

Սովորողների առանձին խմբերի բացահայտումը տարբերում ենք

- Նոր նյութի յուրացման արագությամբ
- Աշխատանքի արագությամբ
- Ընկալման, հիշողության, մտածողության առանձնահատկությամբ
- Գրգռման և արգելակման գործընթացների հավասարակշռությամբ:

Տարբերակված առաջադրանքների կազմումը կամ ընտրությունը, ներառյալ տարբեր տեխնիկա, օգնում են սովորողին ինքնուրույն հաղթահարել առաջադրանքը, աստիճանաբար հարմարվել մատուցվող նյութի նոր ծավալներին, նոր բարդացված աստիճաններին, նոր կարողությունների ձեռքբերմանը:

Ճիշտ կլինի առաջադրանքները կազմելիս սովորողներին չբաժանել /ուժեղների և թույլերի/, այլ կազմել երեք պայմանական խմբեր

- **Խումբ 1** մշտական լրացուցիչ օգնություն պահանջող սովորողներ
- **Խումբ 2** սովորողներ, որոնք կարող են ինքնուրույն հաղթահարել առաջադրանք, յուրացնել նոր նյութը
- **Խումբ 3** սովորողներ,ովքեր կարողանում են կարճ ժամանակում հաղթահարել առաջադրանքները և յուրացնել նոր նյութը:

Առաջին խմբի սովորողներին բնորոշ է ցածր և անկայուն աշխատունակությունը, շուտ հոգնելը, հիշողության, ուշադրության և մտախողության զարգացման ցածր մակարդակը:

Նրանք մշտապես մոտիվացիայի, ժամանակային ռեժիմի հստակ հետևելու, առաջադրանքների որակի ստուգման կարիք ունեն: Սովորաբար ուսուցիչները առավելագույն ուշադրություն են դարձնում այս սովորողներին ի վնաս մնացած սովորողների:

Երկրորդ խմբի սովորողներն ամենաշատը գոհ են ուսուցչից, նրանց հետ դժվարություններ չկան: Ունեն լավ հիշողություն, ուշադրություն, նորմալ զարգացած մտածողություն, գրագետ խոսք, բարեխիղճ են, մշտապես ուսուցչի կարիք ունեն և սովորելու մոտիվացիա:

Երրորդ խմբի երեխաներն ունեն /ակադեմիական /տաղանդ,որը ճանաչողական կարիքների, հուզական ներգրավվածության, մոտիվացիայի և գործողությունները կարգավորելու կարողությամբ է օժտված:

Ինչպես կարող է պրակտիկ ուսուցիչը յուրաքանչյուր դասը դարձնել արդյունավետ և հնարավորինս միաժամանակ դասին ներգրավել բոլոր խմբի սովորողներին: Նա նյութը պետք է ներկայացնի այնպես, առաջադրանքները կազմի այնպես,որ ոչ մի սովորող չձանձրանա և լինի մշտական գործընթացի մեջ:

Դասի արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից.

Կարևոր է մտածել թեմայի մեջ տարբերակված առաջադրանքներ կազմելու կարողություններ և հմտություններ ձեռք բերելու մասին:

Տարբերակված մոտեցման կիրառում պետք է լինի ուսումնական գործընթացի բոլոր փուլերում:

Սովորողների մեծամասնության համար նախապատրաստական աշխատանքը պետք է սկսել հիշողության թարմացմամբ հարցերի միջոցով, գծապատկերների, նկարների ցուցադրմամբ, որին պետք է հաջերդի պատասխաններն մեկնաբանությամբ:

Կրկնությունները պետք է լինեն գործնական աշխատանքի ձևով, յուրաքանչյուր գործողության բացատրությամբ:

Այսպիսով կներկայացնեմ մի դաս, որին մասնակցում են տարբեր մտավոր կարողություններով, տարբեր մակարդակով ընկալունակ սովորողներ.

Սովորողների տարբերակված առաջադրանքներն իրենց մեջ ներառում են սովորողների կողմից գիտելիքների, հմտությունների, կարողությունների յուրացման գործընթացը նախնական ընկալման, ըմբռնման հետ մեկտեղ նրառում է ոչ միայն համախմբում, այլ նաև ստեղծագործում և վերապատրաստում:

Բնագիտական առարկաներից տարբերակված աշխատանքներն կատարվում է ըստ դժվարության աստիճանի կատարելիս սեփական փորձի, դիտարկման, գնահատման և լրացուցիչ տեղեկույթներ ներգրավելու անհրաժեշտությամբ:

Որպեսի տարբերակված դասը դառնա ամենարդյունավետը անհրաժեշտ է իրականացնել սրտացավ մոտեցում, անընդհատ իրականացնել տարբերակված մոտեցում, կազմել տարբերակված առաջադրանքների շղթա, որում կերևա զարգացման տեմպը: Առաջադրանքները պետք է լինեն տարողունակ և կոնկրետ, բնույթը պետք է լինի միայն գործնական, իսկ դրանց ստուգումն ու գնահատումը կանոնավոր:

Տարբերակված առաջադրանքի տեսակն կախված է ուսուցչի առաջադրած նպատակից:

Եթե ուսուցիչը մտահոգված է երեխայի զարգացմամբ, յուրաքանչյուր աշակերտի ուսման հաջողություններով, ապա նա կիրականացնի անհատական և տարբերակված մոտեցում իր բոլոր դասաժամերին, բոլոր դասարանախմբերում:

Կախված տարածաշրջանի աշխարհագրական դիրքից, սոցիալ-տնտեսական պայմաններից, սովորողների մի շարք հատկանիշներից պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում, տարբերակված աշխատանքային գործելաոճ, առաջադրանքների մատչելիություն, աստիճանական բարդացում կախված սովորողի ընկալման, յուրացման մակարդակից:

Ինչպես ցույց են տալիս ուսուցիչների, նաև մեր սեփական դիտարկումները, տարբերակված մոտեցումը լիովին հնարավոր է իրականացնել միայն գիտելիքների, հմտությունների և կարողությունների հարուստ համալիր փորձ ունեցող, վարպետ ուսուցիչների համար:

Տարբերակված ուսուցումը ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է, որի ընթացքում ուսուցիչը, աշխատելով մի խումբ սովորողների հետ, հաշվի

առնելով ուսումնական գործընթացի համար նշանակալի ցանկացած որակի առկայությունը, սովորեցնում է բոլորին իրենց հնարավորությունների, կարողությունների մակարդակով, հարմարեցնելով ուսումն տարբեր խմբերի առանձնահատկություններին:

Աշխատանքի այս մոտեցումը օգնում է ուժեղներին հաստատվել իրենց կարողություններով, իսկ թույլերին հնարավորություն է տալիս զգալ կրթական հաջողությունները, ազատվել թերարժեքության բարդույթից, մոտիվացնում է սովորել այն խմբերում, որտեղ սովորում են տարբեր կարողություններով երեխաներ, բայց առողջ փոխհարաբերությունները տալիս են ցանկալի արդյունք:

Ուսուցիչներն անում են ամեն բան, որպեսզի թույլերն իրենց նվաստացած չզգան,բարձրանանում է ինքնագնահատականը, ձգտում են անել ավելին:

Տարբերակված առաջադրանքները կազմելիս պետք է վարժությունները, առաջադրանքները լինեն ոչ նույն մակարդակի,ոչ նույն քանակի: Տարբերակված առաջադրանքները մեծ հնարավորություններ են բացում տնային առաջադրանքների ժամանակ, տնային առաջադրանքի կատարելագործման առաջին քայլը օպտիմալացումն է որին պետք է հաջորդի կամավորությունը, ինքնուրույն աշխատելու ցանկությունը:

Տարբերակված մոտեցման առանձնահատկությունները.

- երեխաների անհատական հատկանիշների վրա հիմնված է նրանց դաստիարակության և կրթության տարբերակված մոտեցումը:
- Կարողանալ լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին՝ անկախ նրանց տարատեսակ կարողություններից:

Տարբերակված մոտեցման ձևերից է եխաների ներխմբային բաժանումը ենթախմբերի՝ ըստ նմանատիպ, բնորոշ հատկանիշների: Այսպիսի ենթախմբերը ժամանակավոր են, դրանք դինամիկ են. անցումը մի խմբից մյուսն իրականացվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի զարգացման մակարդակը:

Վերջին շրջանում զգալիորեն աճել է հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետաքրքրությունը դպրոցականների տարբերակված ուսուցման խնդրի նկատմամբ: Եվ այս խնդիրն այսօր արդիական է մնում: Ի՞նչ է տարբերակված ուսուցումը և ուսման անհատական մոտեցումը:

Դասարան-դաս համակարգի պայմաններում, երբ դասարանում կան տարբեր կարողություններով, հետաքրքրություններով, տարբեր մտավոր և ֆիզիկական զարգացում ունեցող սովորողներ, արդյունավետ ուսուցում ապահովելու համար անհրաժեշտ է դրան տարբերակված մոտեցում:
Դպրոցական պրակտիկայում մի շարք դեպքերում կիրառվում է սովորողների պարզ տարբերակում՝ լավ, միջին, վատ սովորող: Ինչ-որ չափով դա օգնում է ուսուցչին տարբերակված մոտեցում իրականացնել:

Տարբերակված առաջադրանքները կիրառում ենք բոլոր դասարանախմբերում, քանի որ դասարանների սովորողների մտավոր կարողությունները հավասար չեն կարող զարգանալ, սովորողներն ունեն տարբեր առարկաների ընկալման, յուրացման տարբեր հմարավորություններ:

Տարբերակված առաջադրանքներով աշխատանք իրականացրել ենք նաև մեր դպրոցի 8-Ա դասարանում, որտեղ սովորող 21-աշակերտներից 3-ն ունեն առանձնահատուկ մոտեցման, աշխատանքի կարիք: Այդ սովորողներից մեկն ունի դանդաղ մտածելու կարողություն, սակայն ծնողների և ուսուցիչների համագործակցության արդյունքում դասերին միշտ մասնակցում է մեծ սիրով, ուշադիր է, կարողանում է պատասխանել հարցերին ,որոնք տալիս ենք նոր նյութի ամփոփման ժամանակ, հին դասը ստուգելիս:

Իսկ գրավոր կամ գործնական աշխատանքները կատարելիս հաշվի ենք առնում մրա ունեցած գիտելիքների սահմանը:

Մյուս երկու սովորողները ավելի շատ հոգեբանական աջակցության կարիք ունեն,ընդունակ են,սկայն դասին ներգրավելը մեծ ջանքեր է պահանջում:

Այս սովորողների համար առաջադրանքները կազմում ենք ընդհանուր դասարանի համար կազմված առաջադրանքների նման, միայն առաջարկում ենք գրել կամ պատասղանել այն հարցերին, որոնք շատ բարդ չեն:

Այս աշակերտներն ավելի շատ լավ վերաբերմունքի, հոգատարության կարիք ունեն:

Այս գործում ևս համագործակցում ենք ուսուցչի օգնականների, դասղեկի և ծնողի հետ:

Խնդիրները՝

Տարբերակված առաջարկների կիրառումն թույլ է տալիս ուսումնառությանը ներգրավել յուրաքանչյուր աշակերի իր յուրահատկ հմտություններով և կարողություններով,ապահովում է միասնական գործունեությունը, որն տարբերվում է ըստ կարողության մակարդակների,ստեղծարար մոտեցումների :Ստեղծում է հարգալից վերբերմունք և հավասար պայմաններ բոլոր սովորողնորի համար:

Հավելված 1

Դասի պլան

8-րդ դասարան

Թեմա՝ Մարսողական համակարգի կառուցվածքը և գործառույթները

Դասի նպատակը՝ կազմակերպել տարբերակված առաջադրանքներով դաս, որին կներգրավվեն դասարանի տարբեր կարողություններով բոլոր սովորողները:

Ակադեմիական նպատակ՝ բոլոր սովորողները կիմանան մարսողական համակարգի կառուցվածքը և գործառույթները, կիմանան ֆերմենտների նշանակությունը, կիմանան մարսողական գեղձերը, դրանց նշանակությունը մարսողական գործընթացում:

Զարգացնող, դաստիարակչական նպատակ՝

Կկարողանա վերլուծել, համեմատել և համադրել մարսողական օրգանների կառուցվածքի առանձնահատկությունները, գեղձերի տեղադրվածությունը և նշանակությունը, կկարողանա բացատրել ֆերմենտների կենսաբանական նշանակությոնը, կտեսնի կապը ֆերմենտի և քիմիայում կատալիզատորների միջև:

Այս դասի գիտելիքները սովորողներն, անկախ իրենց մտավոր զարգացման և ֆիզիկական վիճակից, կօգտագործեն կյանքում, առողջ ապրելու և հիվանդությունները կանխարգելելու գործում, կիմանան ճիշտ սնվելու, ռեժիմի կարևորությունը:

Օգտագործվող նյութեր մարդու մարսողական օրգանների կաղապարվածքները, նկարներ, մարսողական օրգանների մոդելներ, գծապատկերներ:

Վերջնարդյունքները

Սովորողը կկարողանա

- թվարկել մարսողական օրգանները
- թվարկել մարսողական գեղձերը
- թվարկել մարսողական ֆերմենտները, բացատրել դրանց ազդեցությունը
- նկարների վրա ցույց տալ օրգանները, նշել գործառույթը
- լրացնել աղյուսակը, որում կլինեն բաց թողնված բառեր
- Բացատրել մարսողական օրգանների կառուցվածքի և գործառույթի համապատասխանությունը

Դասի ընթացքի ընտրված մեթոդները

- Սկիզբը մտագրոհ
- հիմնական մաս դասախոսություն, զրույց, համագործակցություն քարտերի միջոցով
- նոր հասկացությունների, տերմինների դուրսգրում, բացատրություն
- Գնահատում ըստ ակտիվության, ըստ ինքնուրույն մտածողության:

Հավելված 2

Քարտ 1

1. Ինչ է մարսողության գործընթացը, որ օրգաններն են մասնակցում այդ գործընթացին:
2. Որոնք են մարսողական գեղձերը:

Քարտ 2

1. Թվարկել մարսողական օրգանները:
2. Մարսողական որ գեղձերի ծորաններն են բացվում բերանի խոռոչում:

Քարտ 3

1. Սնունդը ինչ փոփոխության է ենթարկվում բերանի խոռոչում
2. Ֆերմենտների նշանակությունը մարսողական գործընթացում:

Քարտ 4

1. Թվարկել մարսողական հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները:
2. Որն է լյարդի նշանակությունը, որտեղ է այն տեղադրված:

Հավելված 3

Նկարի վրա ցույց տալ և համադրել մարսողական օրգանները և դրանց գործառույթները

նկար 1



Օրգաններ	**Գործառույթները**
Ստամոքս	Անունդը շաղախվում է թքով
Բարակ աղիներ	Սննդագնդիկն անցնում է այդտեղով
Կերակրափող	Սկսվում է սննդի քիմիական մշակումը
Ուղիղ աղիք	Այստեղ են բացվում լեղածորանը, ենթաստամոքսային գեղձի ծորան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասի ընթացքում օգտագործում ենք քարտեր, որում լինում են հարցեր բաց թողնված բառերով, նկարներ, որում պետք է ցույց տան օրգանները և նշեն ինչ գիտեն այդ օրգանի մասին:

Ցանկացած նյութ ուսումնասիրելիս հարցնում ենք, թե որտեղ կօգտագործի ստացած գիտելիքները, ինչ ենք դա ուսումնասիրում:

Պարտադիր կապ ենք ստեղծում անցած թեմաների (ներառարկայական) և տարբեր առարկաների (միջառարկայական) միջև:

Ուսումնասիրություններն ցույց են տվել հետևյալ արդյունքները.

- Տարբերակված առաջադրանքներով աշխատանքի կարևորությունը, որն ներգրավում է բոլոր սովորողների:
- Բոլորն իրենց հավասար պայմաններում են զգում, աշխատանքային մթնոլորտը ավելի գրավիչ է դառնում:
- Տարբերակված առաջադրանքներով դասի կազմզկերպումն ունի հետևյալ պատկերը.
- Դասին ներգրավված են դասարանի 100%-ը
- Ակտիվ են սովորողների մոտ 90%-ը
- Տնային տարբերակված առաջադրանքները կատարում են դասարանի մոտ 70-75%-ը
- Որակը և ռաաջադիմությունը կախված է յուրացվող նյութի բարդությունից և գործնական նշանակությունից:
- Այսպիսով, անհրաժեշտ է կատարելագործել տարբերակված ուսուցումն, տարբերակված առաջադրանքների կիրառումն, օգտագործելով մեր և համաշխարհային փորձը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասեև Վ.Գ. <<Վարքի և անձի ձևավորման մոտիվացիա>>. Մ. 1976 թ
2. Դուլնև Գ.Մ. <<Ուսումնական և ուսումնական աշխատանք օժանդակ դպրոցում>>. Մ., <<Լուսավորություն>>, 1981:
3. Mirsky S.L. <<Անհատական մոտեցում օժանդակ դպրոցի ուսանողներին աշխատանքային կրթության մեջ>>,
4. Մ. <<Մանկավարժություն>>, 1990 թ.
5. Պատրակեև Վ.Գ. <<Աշակերտների հոգեբանական և մանկավարժական ուսումնասիրություն աշխատանքի ուսուցչի կողմից>> (<<Դեֆեկտոլոգիա>> ամսագիր, թիվ 6, 1996 թ.)
6. Շիֆ Ժ.Ի. <<Օժանդակ դպրոցի սովորողների մտավոր զարգացման առանձնահատկությունները>>, Մ., 1965: